Ս.ՇՏԻԿՅԱՆ

ԱՌԱՎԵԼ ԲԱՐԵԽՂՃՈՒԹՅՈՒՆ

Սկսենք, մեկ անգամ էլ կրկնելով բազմիցս ասված դրվատանքը. միանգամայն խրախուսելի է «Հայաստան» հրատարակչության նախաձեռնությունը՝ «Հայ մատենա–գիրներ» ընդհանուր խորագրի ներքո, քսան հատորի սահմաններում մեր դասականների գործերի հրատարակումը: Ավելացնենք նաև, որ այդ մտահղացումը չի ծնվել դատարկ տեղում, վերոհիշյալ խորագրի ներքո հրատարակվող գործերի որոշ մասը արդեն թարգմանված էր և հաջողությամբ քննություն բռնած: Խորենացու «Հայոց պատմության» (թարգ. Ստ. Մալխասյանց), Կորյունի «Վարք Մաշտոցի» (թարգ. Մ. Աբեղյան), Եղիշեի «Վարդանանց պատմության» (թարգ. Եր. Տեր-Մինասյան), Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» (թարգ. Ստ. Մալխասյանց) և այլ թարգմանությունները իրենց համապա–տասխան առաջաբաններով ու ծանոթագրություններով, մնում են չգերազանցված առ այսօր: Եվ բնականաբար, մատենաշարը նախաձեռնողները պետք է հարգեին իրենց ականավոր նախորդների արած գործը, պետք է վերցնեին այն ամենը, ինչ արդեն արված էր, դա ընդունեին որպես հիմք և, շարունակելով նրանց աշխատանքը, անդրադառնային մեր այն դասականներին, որոնց աշխարհաբար թարգմանությունները առ այսօր ինչ-ինչ պատճառներով չեն եղել: Այդ է հուշում և միաժամանակ պարտավորեցնում փաստերի զգաստ տրամաբանությունը: Սակայն այդ տրամաբանությունը տեղի է տալիս հուսա–հատեցնող հիասթափության, երբ քննում ես «Հայ մատենագիրներ» մատենաշարի առաջին գործը՝ Մովսես Խորենացու համբավավոր «Հայոց պատմությունը» (բնագիրը, առաջաբանն ու ծանոթագրությունները ակադ. Ստ. Մալխասյանցի), ավելի ճիշտ Մալխասյանցի այն «խմբագրումները», որոնք այնպես շռայլորեն արել են խմբագիրներ Վարագ Առաքելյանն ու Աշոտ Ա. Աբրահամյանը: Գաղտնիք չէ, որ Մալխասյանցն այն հայագետն է, ով տասնյակ տարիներ զբաղվել է Մովսես Խորենացիով և հիանալի գիտեր ոչ միայն Պատմահոր ստեղծագործությունը, այլև նրա շուրջ ստեղծված ընդարձակածավալ ու բազմալեզու գրականությունը: ՈՒստի, եթե իրոք անհրաժեշտ էր խմբագրել Խորենացու՝ 1940 թ. հրատարակված «Հայոց պատմության» Մալխասյանցի առաջաբանը, որն, ի դեպ, գրված է մասնագիտական մեծ հմտությամբ, ապա դա պետք էր անել գործի հանդեպ մեծագույն սրտացավությամբ: Երբ խմբագիրները, օրինակ, Մալխասյանցի գրած «վարիանտը» փոխարինել են «տարբերակով», «թեորիան»՝ «տեսությամբ», «իդեականը»՝ «գաղափարա–կանով», «կուլտուրան»՝ «մշակույթով» և այլն, եթե Մալխասյանցի գրած «ապացուցանելը»

խմբագիրները դարձրել են «ապացուցել», «գայլի ծծով է մեծացելը»՝ «գայլի ստինքով է մեծացել», «տասնևչորսը»՝ «տասնչորս» և այլն, ապա այսպիսի խմբագրման հետ կարելի է հաշտվել: Բայց ինչպես բացատրել այն բազմապիսի փոփոխումներն ու ավերածու–թյունները, որոնք կատարել են Վարագ Առաքելյանն ու Աշոտ Աբրահամյանն Մալխասյան–ցի գրած առաջաբանում, որի հետևանքով այդ շահեկան առաջաբանը պարզապես անճանաչելի է դարձել:

Խոսենք փաստերով:

Մալխասյանցը զարգացնում ու հիմնավորում է այն տեսությունը, որ Խորենացին եղել է քաղքեդոնական (երկաբնակ), մի տեսակետ, որի շուրջն, ի դեպ, մեր գրականության մեջ երկարատև վիճաբանություններ են եղել: Եվ միայն այն պատճառով, որ Առաքելյանն ու Աբրահամյանը այս հարցի վերաբերյալ հակառակ կարծիք են պաշտպանում, նրանք հանգիստ խղճով Մալխասյանցին էլ «վերամկտել են» ըստ իրենց՝ դուրս թողնելով հետևյալ բոլոր հատվածները՝ էջ XVIII-XXII, XXIII, էջ XXIV-ից մի հատված, որտեղ Մալխասյանցն ապացուցում է Խորենացու՝ քաղքեդոնականության հետ ունեցած աղերսակցությունը:

Մալխասյանցը բերում է Թովմա Արծրունու այն վկայությունը, ըստ որի Խորենացու պատմությունն ունեցել է առ այսօր անհայտ չորրորդ գլուխ կամ գիրք ևս և հերքում է այդ տեսակետը, այն համարելով Արծրունու վկայությունը սխալ հասկանալու հետևանք: Խմբագիրները դուրս են թողել Մալխասյանցի բոլոր բացատրականները (էջ XXIX-XXXI), որի հետևանքով թե՛ Արծրունու վկայությունն է մնացել առանց անհրաժեշտ մեկնաբանու–թյան, և թե՛ իր՝ Մալխասյանցի պնդումները չորրորդ գրքի գոյություն չունենալու մասին դարձել են սոսկ չհիմնավորված հայտարարություններ:

Մալխասյանցը ամենուրեք, նաև Խորենացու պատմության առաջաբանում, պաշտպանում է այն միտքը, որ եղել է մեկը, որը խմբագրել է Ագաթանգեղոսի պատ–մությունը և հետևաբար, մեր ձեռքի տակ ոչ թե բուն Ագաթանգեղոսի տեքստն է, այլ դրա խմբագրությունը: Մի տեսակետ է սա, որը պաշտպանում էին նաև Աբեղյանն ու Մառը: Առաքելյանն ու Աբրահամյանը այստեղ էլ «խմբագրական աշխատանք» են կատարել: Բոլոր այն դեպքերում, երբ Մալխասյանցը գրում է «Ագաթանգեղոսին ԽՄԲԱԳՐՈՂԸ» (էջ XVII), կամ «Ագաթանգեղոսի մեզ հասած ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ» (էջ XXIII) և այլն, խմբագիրները իսկույն դուրս են թողել ընդգծված բառը կամ նախադասությունը, միտքը «ձևավորելով» այնպես, որ Ագաթանգեղոսի պատմության՝ խմբագրված լինելու մասին

հիշողություն անգամ չի մնացել: Այսպիսով, Մալխասյանցին է վերագրվում մի միտք՝ Ագաթանգեղոսի ինքնուրույն հեղինակ լինելը, որը նա ոչ միայն չի ընդունել, այլև գրով և բանիվ բազում առիթներով հերքել է:

Նույն դրությունն է նաև Փավստոսի դեպքում: Հայտնի է, որ Մալխասյանցը պնդում էր, որ «Բուզանդարան պատմութիւնքը» (այսպիսին է Փավստոսի պատմության՝ մեզ հասած հնագույն վերնագիրը) ընդհանուր ոչինչ չունի Փավստոսի հետ, և այդ պատմության հեղինակը առ այսօր անհայտ անձնավորություն է (տես էջ XVII և հտն.): Խմբագիրներին այս էլ դուր չի եկել և նրանք ամենուրեք Մալխասյանցին են վերագրել Փավստոսի՝ «Հայոց պատմության» հեղինակը լինելու միտքը, մի գաղափար, որը Մալխասյանցը ոչ միայն չի ընդունել, այլև միշտ ապացուցել է դրա հակառակը:

Չենք հիշատակում առաջաբանում կատարված մանր փոփոխությունները, որոնք ուղղակի անթիվ են: Մալխասյանցն, օրինակ, գրում է. «Մովսես Խորենացին ԵԶԱԿԱՆ գրական դեմք է...», խմբագիրները ընդգծված բառը դարձրել են «եզակի», չգիտակցելով անշուշտ, որ դրանք միանգամայն այլ իմաստներ են արտահայտում: Մալխասյանցը գրել է. «Այդպիսի տարիքում, ալևորված մորուքով, չեն գնում բարձրագույն ուսում ստանալու, ԱՅԼ ԱՎԵԼԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՍԱԿՈՒՄ» (էջ X): Խմբագիրները ընդգծված պարբերությունը դուրս են թողել, որի հետևանքով նախադասությունը կիսատ է մնացել: Մալխասյանցը գրում է. «Ինչպե՞ս սրտառուչ կերպով է արտահայտում ԽՈՐԵՆԱՑԻՆ իր վիշտը» (էջ XII): Խմբագիրները դուրս են թողել ընդգծված բառը: Անհասկանալի է դառնում, թե ով է իր վիշտն արտահայտել սրտառուչ կերպով: Մալխասյանցը գրել է. «Հալածանքները հետևանք էին ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ պայքարի» (էջ XIV և XVI): Խմբագիրները ընդգծված բառի փոխա–րեն երկու դեպքում էլ դրել են «Քաղաքական» տերմինը, որով բոլորովին այլ իմաստ է ստացել ամբողջ նախադասությունը: Մալխասյանցը, վերջապես, խոսելով հունաբան դպրոցի ներկայացուցիչների մասին, գրում է, որ նրանք կամենում էին հայերենի մեջ ներմուծել «գոնե մի մասը այն բազմատեսակ առավելություններից, որ ուներ հունարենը, – նախդիրներով կազմված հազարավոր բառեր, համաձայնական ազատություններ, հոդեր, սեռեր և այլն, որոնցից զուրկ էր հայերենը» (էջ XVII): Խմբագիրները նախադասությունը փոխել են հետևյալ կերպ. «Գոնե մի մասը այն բազմատեսակ առանձնահատկություններից, որ ուներ հունարենը, սեռեր և այլն, որոնք հատուկ էին հունարենին», այսինքն՝ ոչ միայն նոր միտք է վերագրված Մալխասյանցին, այլև նախադասությունն այնպես է աղավաղված, որ դարձել է անհասկանալի:

Նույն խմբագրական կամակորություններն ենք նկատում՝ ավելի մեծ չափերով, երբ քննում ենք Խորենացու «Պատմությանը» կցված ծանոթագրությունները: Բավական է ասել միայն, որ Մալխասյանցը «Պատմությանը» կցել էր 358 ծանոթագրություն, իսկ Ա. Աբրահամյանն ու Վ. Առաքելյանը այդ քանակությունից թողել են ընդամենը 211-ը: Գրչի մի հարվածով, այսպիսով, դուրս են թողնվել 147 ծանոթագրություններ, որոնց գերակշիռ մասը մեծարժեք են և ըստ էության պետք է օգնեին ընթերցողին Պատմահոր «Հայոց պատմությունը» մինչև վերջ հասկանալու համար: Նման «խմբագրման» հետևանքով բազմաթիվ անուններ, դեպքեր, այս կամ այն բնույթի իրողություններ «կորցրել» են իրենց ծանոթագրություններն և այսօրվա մեր ընթերցողի համար կամ անհասկանալի են դարձել կամ կարող են սխալ մեկնաբանվել:

Խոսենք դարձյալ օրինակներով:

Մալխասյանցը «Պատմության» առաջին գրքի վերնագիրը թարգմանել է «Հայոց Մեծերի ծննդաբանությունը» և ծանոթագրության մեջ (№ 1) բացատրել, թե ինչ շարժառիթներից ելնելով է թարգմանությունը կատարել հատկապես այդպես: Խմբագիրները դուրս են թողել ծանոթագրությունը, և Մալխասյանցի թարգմանությունը մնացել է առանց համապատասխան հիմնավորման:

Թարգմանելով առաջին գրքի Բ գլուխը՝ Մալխասյանցը ծանոթագրել է, թե քերականորեն ինչ կառուցվածք ունի այդ գրքի երկրորդ՝ բարդության առումով միշտ վեճերի տեղիք տված նախադասությունը, և ինչպես պետք է այն ընթերցել ճիշտ հասկանալու համար: Խմբագիրները դուրս են թողել ամբողջ ծանոթագրությունը (№ 5), որի պատճառով վերոհիշյալ գլուխը ընթերցողի համար մնում է անհասկանալի:

Տալով Նոյ նահապետի «կենսագրությունը», Խորենացին նշում է, որ եթե նրա ապրած տարիները աստվածային շրջաններով անգամ հաշվելու լինենք, դարձյալ դժվար է հավատալ նրա՝ այդքան երկարակյաց լինելուն: Մալխասյանցը ծանոթագրել է «Աստվածային շրջաններ» հասկացողությունը և այդ առիթով տվել է տոմարական այն հաշվումների բացատրությունը, որոնք հանդիպում են Խորենացու մոտ (ծանոթ. № 15): Խմբագիրները հանել են ամբողջ ծանոթագրությունը, որի հետևանքով թե՛ վերևում բերված արտահայտությունը, և թե՛ հետագայում պատահող զանազան տոմարական հաշիվները այսօրվա ընթերցողի համար անհասկանալի են մնում:

Խորենացին Նոյի որդիների անունների հանրածանոթ՝ Սեմ, Քամ, Հաբեթ ձևերի հետ կիրառում է նաև նրանց հունական տարբերակները՝ Զրվան, Տիտան և Հապետոսթե: Սա ծանոթագրել է Մալխասյանցը և արել իր խիստ կարևոր նկատումները (ծանոթ. № 22): Սա–կայն ծանոթագրությունն ամբողջությամբ հանված է, իսկ դրա հետևանքը հեշտ է հաս–կանալ:

Մար-Աբբասյան մատյանն սկսվում է «Այս մատյանն Ալեքսանդրի հրամանով քաղդեարեն լեզվից...» ձևով: Մալխասյանցը ծանոթագրել է, որ հիշատակվածը Ալեքսանդր Մակեդոնացին է (№ 36), իսկ խմբագիրները խնամքով հանել են ծանոթագրությունը, ըն–թերցողի համար անհայտ թողնելով Ալեքսանդրի ով լինելը:

Հայկի՝ Արարատյան երկիր գալը նկարագրելուց հետո, Խորենացին հավելում է, որ «այնտեղ, կալվածքում շինում է բնակության տուն»: Մալխասյանցը ծանոթագրել է (№ 41), որ «տուն» բառը պետք է հասկանալ հին՝ «ազգ», «ընդարձակ երկրամաս», «դաստակերտ» իմաստով: Ծանոթագրությունն ամբողջապես հանված լինելու հետևանքով, ընթերցողի համար այս բառի իմաստը, նաև Պատմահոր միտքը, աղավաղված է դարձել:

Հանրահայտ «Ողբում» Խորենացին գրում է. «Ո՞վ պետք է զսպե առողջ վարդապե–տության հակառակ դուրս եկողների հանդգնությունը, որոնք... շատ ուսուցիչներ էին փոխում և բազմաթիվ գրքեր, ինչպես ասաց հայրերից մեկը»: Մալխասյանցը ծանոթագրել է (№ 352), որ «հայրերից մեկը» Գրիգոր Նազիանզացին է: Քանի որ ծանոթագրությունը հանված է, Խորենացու ակնարկն ընթերցողի համար անհասկանալի է մնում:

Կարիք կա՞ նորանոր օրինակների...

Եվ որքան էլ զարմանալի թվա, պետք է արձանագրենք, որ Մալխասյանցին խմբա–գրելու սույն պատմությունը երկարատև անցյալ ունի: 1961 թ. «Հայպետհրատը» վերա–հրատարակեց Պատմահոր «Հայոց պատմությունը», որի գրաբարից կատարված թարգ–մանությունը, առաջաբանն ու ծանոթագրություններն, ինչպես հայտնի է, պատկանում են Ստեփաննոս Մալխասյանցին: Առաջին անգամ այս հրատարակությունն է, ահա, որ հաջողությամբ «խմբագրել» է Վարագ Առաքելյանը, այսինքն՝ դուրս է թողել մոտ երկու հարյուր ծանոթագրություն: Խմբագրողն այդ ժամանակ գերադասել է ավելի զգույշ լինել. նա գրեթե ձեռք չի տվել Մալխասյանցի առաջաբանին և գրքին կցված ծանուցման մեջ խոստովանել է, որ բարվոք է համարել «խմբագրական ու ոճական անհրաժեշտ փոփո–խություններ կատարել, իսկ ծանոթագրությունների մեջ արվել են որոշ կրճատումներ»:

Հետագայում՝ 1969 թ., «Հայ մատենագիրներ» մատենաշարի համար հրատարակության պատրաստելով Խորենացուն, Վարագ Առաքելյանը, արդեն Աշոտ Աբրահամյանի հետ, մի կողմ են թողել բոլոր զգուշավորությունները և Մալխասյանցի հետ վարվել են այնպես, ինչպես նպատակահարմար են գտել: Ըստ որում, խմբագիրները ոչ միայն ակնարկ անգամ չեն արել իրենց կատարած «խմբագրական աշխատանքի» մասին, այլ այդ ամենը հանգիստ խղճով զետեղել են «Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադ– միկոս Ստ. Մալխասյանցի» անվանաթերթի ներքո:

Եվ զարմանալին այն է, որ «Պատմագիրք հայոց» մատենաշարի այս առաջին գիրքն ունի ութ հոգուց բաղկացած ծանրակշիռ խմբագրական կոլեգիա, որի կազմում ընդգրկված են Աշոտ Հովհաննիսյանի և Կարապետ Մելիք-Օհանջանյանի նման պատկառազդու հայագետներ: Մի՞թե կոլեգիայի անդամների մեջ չի եղել մեկը, որ գեթ մեկ անգամ աչքի անցկացներ այդ խմբագրությունը:

Որպես վերջաբան: Քանի որ «Հայ մատենագիրներ» խորագիրը կրող մատենաշարը գտնվում է հրատարակման ընթացքում և հաջորդաբար լույս աշխարհ են գալու այլ դասականների՝ Եղիշեի, Փարպեցու, Եզնիկի, Ագաթանգեղոսի գործերը ևս, կկամենայինք մատենաշարի հրատարակմամբ զբաղվողների ուշադրությունը հրավիրել մեր հոդվածի վրա, որպեսզի վճռականորեն թույլ չտրվեն և հիմնավորապես կանխվեն այսպիսի «խմբագրումները»:

Գրական թերթ,

1969, № 31, օգոստոսի 1